# «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ

## Ֆինանսական հաշվետվություններ

2011թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 5 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 9 |

KPMG
**KPMG Armenia cjsc**
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ռ-ԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Էնդրյու Քոքշել
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

KPMG Armenia CJSC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
27 ապրիլի 2012թ.

| հազ. դրամ | Ծնթգ. | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|---|
| Համախառն ապահովագրավճարներ | 5 | 2,363,173 | 474,455 |
| Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ | 5 | (153,732) | (183,034) |
| **Զուտ ապահովագրավճարներ** | | **2,209,441** | **291,421** |
| Չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն | 5 | (253,230) | (61,375) |
| Վերաապահովագրողների բաժինը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում | 5 | 18,818 | 37,039 |
| **Զուտ վաստակած ապահովագրավճարներ** | | **1,975,029** | **267,085** |
| Կարգավորված պահանջներ՝ առանց վերաապահովագրության | 6 | (781,927) | (139,781) |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների փոփոխություն | 6 | (72,699) | (88,248) |
| **Զուտ պահանջներ** | | **(854,626)** | **(228,029)** |
| Ձեռքբերման ծախսումներ | 7 | (309,663) | (55,080) |
| Զուտ եկամուտ միջնորդավճարների տեսքով վերաապահովագրությունից | | 24,436 | 23,013 |
| **Ապահովագրական գործունեության արդյունքները** | | **835,176** | **6,989** |
| Ֆինանսական եկամուտ | 8 | 267,708 | 84,948 |
| Ֆինանսական ծախսեր | 8 | (10,108) | (78,589) |
| Վարչական ծախսեր | 9 | (877,212) | (369,934) |
| Վնաս մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքների վաճառքից | | (7,605) | - |
| Այլ գործառնական ծախսեր | | (27,893) | - |
| Արժեզրկումից կորուստներ | 10 | (72,941) | (15,768) |
| **Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը** | | **107,125** | **(372,354)** |
| Շահութահարկի գծով օգուտ | 11 | 50,817 | - |
| **Շահույթ/ (վնաս) և ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար** | | **157,942** | **(372,354)** |

5-ից 57-րդ էջերում ներկայացված ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2012թ. ապրիլի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Սամվել Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Վարդանուշ Մինասյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 57-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնթգ. | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 12 | 135,265 | 231,412 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 13 | 1,875,086 | 1,931,861 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | | - | 99,899 |
| Տրված վարկեր | | 74,190 | 18,632 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 14 | 732,356 | 466,235 |
| Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում | 15 | 134,169 | 115,720 |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումներ | 7 | 159,884 | 170,155 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 16 | 138,534 | 42,079 |
| Այլ ակտիվներ | | 18,304 | 17,777 |
| Կանխավճարներ շահութահարկի գծով | | 17,414 | 6,496 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 17 | 50,817 | - |
| Կանխավճարներ | | 85,870 | 41,418 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **3,421,889** | **3,141,684** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | 15 | 650,543 | 324,983 |
| Վերաապահովագրության և ապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 18 | 124,612 | 183,646 |
| Որպես կանխավճար ստացված ապահովագրավճարներ | | 779,319 | 1,166,179 |
| Վարկեր և փոխառություններ | 19 | 142,916 | - |
| Այլ պարտավորություններ | 20 | 155,239 | 55,558 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **1,852,629** | **1,730,366** |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 21 | 1,870,000 | 1,870,000 |
| Կուտակված վնաս | | (300,740) | (458,682) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **1,569,260** | **1,411,318** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **3,421,889** | **3,141,684** |

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 57-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնթզ. | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ապահովագրության գծով ստացված ապահովագրավճարներ | | 1,632,256 | 1,214,351 |
| Վերաապահովագրության գծով վճարված ապահովագրավճարներ | | (133,887) | (61,916) |
| Վճարված պահանջներ և օգուտներ | | (778,338) | (186,605) |
| Վճարված միջնորդավճարներ | | (334,071) | (179,002) |
| Ստացված տոկոսներ | | 196,809 | 61,349 |
| Վճարված տոկոսներ | | (5,135) | - |
| Վարչական ծախսեր | | (835,885) | (334,094) |
| Այլ գործառնական ծախսերի գծով վճարումներ | | (27,893) | - |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | | |
| Այլ ակտիվներ | | (469) | (17,867) |
| Տրված վարկեր | | (15,453) | (17,352) |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | | 105,136 | (1,006,656) |
| **Գործառնական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան հարկերի վճարումը** | | **(196,930)** | **(527,792)** |
| Վճարված շահութահարկ | | (10,918) | (4,818) |
| **Գործառնական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | | **(207,848)** | **(532,610)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | | 93,777 | (99,899) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ | | (124,169) | (48,902) |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | | **(30,392)** | **(148,801)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Մուտքեր վարկերի և փոխառությունների գծով | | 617,000 | - |
| Վարկերի և փոխառությունների մարում | | (475,719) | - |
| Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից | | - | 800,000 |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | **141,281** | **800,000** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | | **(96,959)** | **118,589** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 812 | (8,380) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | | 231,412 | 121,203 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | 13 | **135,265** | **231,412** |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 57-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնթգ. | Բաժնետիրական կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 1 հունվարի 2010թ.** | | 1,070,000 | (86,328) | 983,672 |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | | | | |
| Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար | | - | (372,354) | (372,354) |
| **Սեփականատերերի հատկացումներ** | | | | |
| Թողարկված բաժնետոմսեր | 21 | 800,000 | - | 800,000 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2010թ.** | | 1,870,000 | (458,682) | 1,411,318 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | | |
| Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | | - | 157,942 | 157,942 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2011թ.** | | 1,870,000 | (300,740) | 1,569,260 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 57-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 1 Ներածություն

## (ա) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## (բ) Հիմնական գործունեությունը

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 2008թ-ին Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունն ունի ոչ կյանքի ապահովագրության տաս ապահովագրական դասերով գործունեության իրականացման լիցենզիա: Ընկերության գործունեությունը կարգավորում են ՀՀ կենտրոնական բանկը («ՀՀ ԿԲ») և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն:

Հայաստանի Հանրապետությունում Ընկերությունը գործունեությունն իրականացնում է իր գլխամասային գրասենյակի և գործակալությունների ցանցի միջոցով: Գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փող. 16 1/1:

Ընկերության բաժնետերերն են՝ «Ոլիգրաֆիա» ՓԲԸ-ն (50%) և «Սի Այ Էս Էքուիթի Փարթներս Լիմիթիդ» ՍՊԸ-ն (50%):

Ընկերության վերջնական վերահսկող կողմ են հանդիսանում երկու անձ՝ Սերգեյ Սարկիսովը և Գագիկ Զաքարյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

# 2 Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

## (բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

**(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

**(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ - Ծանոթագրություն 14
- Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ - Ծանոթագրություն 15

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

**(ա) Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Ապահովագրության պայմանագրեր

*(i) Պայմանագրերի դասակարգում*

Ապահովագրության պայմանագիրն այն պայմանագիրն է, ըստ որի Ընկերությունը պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին կամ այլ շահառուին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի կամ այլ շահառուի վրա: Ապահովագրական ռիսկը չի հանդիսանում ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը հետևյալ նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, արժեթղթի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում, այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին: Ապահովագրության պայմանագրերը կարող են փոխանցել նաև որոշ ֆինանսական ռիսկ: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը կարող է Ընկերության կողմից նշանակալի հատուցումների վճարման պատճառ դառնալ: Պայմանագիրը, որը դասակարգվում է որպես ապահովագրության պայմանագիր, մնում է որպես ապահովագրության պայմանագիր, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է: Պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությանն ապահովադրից փոխանցվող ռիսկը նշանակալի չի, դասակարգվում են որպես ֆինանսական գործիքներ:

*(ii) Պայմանագրերի ճանաչում և չափում*

*Ընդհանուր ապահովագրության պայմանագրեր*

*Ապահովագրավճարներ*

Համախառն ապահովագրավճարները ներառում են տարվա ընթացքում կնքված պայմանագրերից ստացված ապահովագրավճարները, անկախ այն փաստից, թե արդյոք դրանք ամբողջությամբ կամ մասնակի վերաբերում են հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին: Ապահովագրավճարները բացահայտվում են համախառն հիմունքով՝ ներառելով միջնորդներին վճարվելիք կոմիսիոն վճարները և բացառելով ապահովագրավճարների գծով հարկերը և տուրքերը: Ստացված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես հասույթ: Ընկերությունն ապահովագրավճարները վաստակում է ռիսկն իր վրա վերցնելու ամսաթվից, փոխհատուցման ժամանակաշրջանի ընթացքում՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարները ճանաչվում են որպես ծախս՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարների այն մասը, որը չի ճանաչվում որպես ծախս, հաշվառվում է որպես կանխավճար:

*Ապահովագրության պայմանագրերի չեղյալ հայտարարում*

Ապահովագրության պայմանագիրը չեղյալ է հայտարարվում, եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովադիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը: Այս իսկ պատճառով, չեղյալ են հայտարարվում հիմնականում ապահովագրության այն պայմանագրերը, որոնցով նախատեսված ապահովագրավճարները վճարվում են մասնաբաժիններով ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

### *Չվաստակած ապահովագրավճարների պահուստ*

Չվաստակած ապահովագրավճարների պահուստն իրենից ներկայացնում է համախառն ապահովագրավճարների այն մասը, որն ակնկալվում է վաստակել հաջորդ կամ հետագա ֆինանսական տարիներում: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հաշվարկվում է առանձին յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի համար՝ օգտագործելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը ճանաչելիս հաշվետու ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի ակնկալվող չեղյալ հայտարարումները հաշվի չեն առնվում:

### *Պահանջներ*

Զուտ պահանջները ներառում են ֆինանսական տարվա ընթացքում վճարված պահանջները՝ չվճարված պահանջների գծով պահուստի շարժի հետ մեկտեղ: Չվճարված պահանջները ներառում են հաշվետու ամսաթվի դրությամբ առկա, սակայն չվճարված բոլոր պահանջների մարման համար գնահատված ամբողջ ծախսի գծով պահուստները, լինեն դրանք ներկայացված, թե՝ ոչ, ինչպես նաև պահանջների մարման համար պահանջվող հարակից արտաքին ծախսերի գծով պահուստները:

Չվճարված պահանջները գնահատելու համար ուսումնասիրվում են առանձին պահանջները և ձևավորվում են պահուստներ տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների գծով, հաշվի առնելով ներքին և արտաքին կանխատեսելի դեպքերի հետևանքները, այդ թվում՝ արտաքին պահանջների մարման ծախսերը, օրենսդրական փոփոխությունները, նախկին փորձը և միտումները: Չվճարված պահանջների գծով պահուստները չեն զեղչվում:

Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով ակնկալվող վերականգնումները ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ: Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով վերականգնումների գնահատման համար կիրառվում է չվճարված պահանջների գնահատման համար օգտագործվող նմանատիպ մեթոդը: Նախորդ տարիներում ձևավորված պահանջների գծով պահուստների գումարների ճշգրտումներն արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որի ընթացքում կատարվել են ճշգրտումները, և առանձին բացահայտվում են՝ էական լինելու դեպքում: Կիրառվող մեթոդները և կատարված գնահատումները վերանայվում են կանոնավոր հիմունքով:

### *Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստ*

Պահուստ է ձևավորվում ուժի մեջ գտնվող ռիսկերի գծով, որոնք առաջանում են ընդհանուր ապահովագրության պայմանագրերի հետ կապված, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի չլրացած ժամկետներին վերագրելի պահանջների և ծախսերի անկնալվող արժեքը գերազանցում է այդ ապահովագրության պայմանագրերին վերաբերող չվաստակած ապահովագրավճարների պահուստը՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները հանելուց հետո: Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստը հաշվարկվում է ելնելով բիզնեսի դասերից, որոնք կառավարվում են միասնական հիմունքով՝ չվաստակած ապահովագրավճարները և ուժի մեջ գտնվող պահանջների գծով պահուստերն ապահովելու համար կատարած ներդրումներից ակնկալվող ապագա հատույցները հաշվի առնելուց հետո:

***(iii) Վերաապահովագրություն***

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է վերապահովագրություն՝ վերապահովագրողներին ռիսկի մասնակի փոխանցման միջոցով իր հնարավոր զուտ վնասը սահմանափակելու նպատակով: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Ընկերությանն ապահովադիրների հանդեպ հանձն առած իր պարտականություններից:

Փոխանցված ապահովագրավճարներ և փոխհատուցված օգուտները ներկայացվում են շահույթում կամ վնասում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համախառն հիմունքով:

Վերաապահովագրության գծով ակտիվները ներառում են փոխանցված ապահովագրության գծով պարտավորությունների դիմաց վերաապահովագրական ընկերություններից ստացվելիք մնացորդները: Վերաապահովագրությունից վերականգնման ենթակա գումարները գնահատվում են նույն մեթոդով, որը կիրառվում է չվճարված պահանջների պահուստի կամ վերաապահովագրության պայմանագրի հետ կապված կարգավորված պահանջների գնահատման համար:

Վերաապահովագրության գծով ենթադրվող ապահովագրավճարները ճանաչվում են որպես հասույթ և հաշվառվում են այնպես, ինչպես կհաշվառվեին, եթե վերաապահովագրությունը համարվեր ուղղակի բիզնես՝ հաշվի առնելով վերաապահովագրվող բիզնեսի ծառայությունների վերադասակարգումը:

Վերաապահովագրության պայմանագրերի շրջանակներում փոխհատուցման ենթակա գումարները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ իրեն հասանելիք բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք, և այդ դեպքն արժանահավատորեն չափելի ազդեցություն ունի այն գումարների նկատմամբ, որոնք Ընկերությունը կստանա վերաապահովագրողից: Որպես վերաապահովագրության գծով ակտիվներ հաշվառվում են միայն այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք նախատեսում են նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք չեն նախատեսում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում, հաշվառվում են որպես ֆինանսական գործիքներ:

***(iv) Հետաձգված ձեռքբերման ծախսումներ***

Ձեռքբերման ծախսումները, որոնք իրենցից ներկայացնում են ապահովագրական գործակալներին և բրոկերներին վճարված կոմիսիոն գումարները և վերաապահովագրության գծով կոմիսիոն վճարներ, հետաձգվում ու ամորտիզացվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում Ընկերությունը վաստակում է համապատասխան ապահովագրավճարները: Հետաձգված ձեռքբերման ծախսումները նվազեցվում են այն կոմիսիոն գումարների չափով, որոնք ենթակա են վճարման ապագա ժամանակաշրջաններին վերաբերող ժամկետանց ապահովագրության պայմանագրերի հետ կապված:

***(v) Պարտավորությունների համարժեքության ստուգում***

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է պարտավորությունների համարժեքության ստուգում, որոշելու համար, թե արդյոք ապահովագրության պայմանագրերի գծով պահուստները (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները և ոչ նյութական ակտիվները, ինչպիսիք են ձեռնարկատիրական

գործունեության միավորման կամ պորտֆելի փոխանցման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվները) համարժեք են: Այս ստուգումների համար օգտագործվում են ապագա պայմանագրային դրամական հոսքերի և հարակից ծախսերի, այդ թվում` պահանջների մարման ծախսերի, ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներն ապահովող ակտիվներից ստացված ներդրումային եկամտի ներկայիս լավագույն գնահատականը: Պակասորդի բացահայտման դեպքում համապատասխան հետաձգված ձեռքբերման ծախսումները և համապատասխան ոչ նյութական ակտիվները արժեզրկվում են, իսկ անհրաժեշտության դեպքում ձևավորվում է լրացուցիչ պահուստ: Պակասորդը ճանաչվում է հաշվետու տարվա շահույթում կամ վնասում:

*(vi) Ապահովագրության գծով ստացելիք և վճարվելիք գումարներ*

Ապահովադիրներին, գործակալներին և վերաապահովագրողներին վճարվելիք և նրանցից ստացվելիք գումարներն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքներ և ներառվում են ապահովագրության գծով ստացելիք և վճարվելիք գումարների կազմում, այլ ոչ` ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներում կամ վերապահովագրության գծով ակտիվների կազմում: Ապահովադիրների կողմից վճարվելիք գումարները ճանաչելիս հաշվետու ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի ակնկալվող չեղյալ հայտարարումները հաշվի չեն առնվում: Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրության գծով ստացվելիք գումարներն արժեզրկման տեսանկյունից: Արժեզրկմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3-ի (է) կետում:

**(գ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները, ընթացիկ հաշիվների մնացորդները և ցպահանջ ավանդները:

**(դ) Ֆինանսական գործիքներ**

*(i) Դասակարգում*

*Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը* ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների`

- որոնց Ընկերությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Ընկերությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները` վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

*Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները* ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների`

- որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Ընկերությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

### *(ii) Ճանաչում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

### *(iii) Չափում*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

***(iv) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս***

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

***(v) Ապաճանաչում***

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

***(vi) Հաշվանցում***

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

**(ե) Հիմնական միջոցներ**

***(i) Սեփական ակտիվներ***

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

***(ii) Մաշվածություն***

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| – Կապի սարքավորումներ և համակարգիչներ | 1 տարի |
| – Փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – Այլ | 5 տարի |

**(գ) Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

**(է) Արժեզրկում**

***(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները կամ տնտեսական պայմանները, որոնք կապված են ակտիվների գծով ձախողումների կամ արժեթղթի համար ակտիվ շուկայի վերացման հետ:

*Վարկեր, դեբիտորական պարտքեր և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթեր*

Ընկերությունը վարկերը, դեբիտորական պարտքերը և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերը, դեբիտորական պարտքերը և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերի, դեբիտորական պարտքերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Վարկերը, դեբիտորական պարտքերը և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով վարկերը, դեբիտորական պարտքերը և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են՝ հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում է պահուստային հաշվում՝ վարկերի, դեբիտորական պարտքերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերի դիմաց: Ընկերությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի հակադարձման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

## *(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ*

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## (ը) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճարների կամ շահույթի բաշխման պլանների համաձայն, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(թ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը` որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե հետևանքներն էական են, ապա պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և, անհրաժեշտության դեպքում, այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը:

**(ժ) Բաժնետիրական կապիտալ**

***(i) Սովորական բաժնետոմսեր***

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում` առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

***(ii) Արտոնյալ բաժնետոմսեր***

Արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են են որպես սեփական կապիտալ, եթե ենթակա չեն հետ գնման կամ ենթակա են հետ գնման ըստ Ընկերության որոշման, և շահաբաժինները վճարվում են հայեցողական կարգով: Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխում` Ընկերության բաժնետերերի հաստատումից հետո:

Արտոնյալ բաժնետիրական կապիտալը դասակարգվում է որպես պարտավորություն, եթե ենթակա է հետ գնման որոշակի նշված ամսաթվին կամ ըստ բաժնետերերի որոշման, կամ եթե շահաբաժինները վճարվում են ոչ հայեցողական կարգով: Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են տոկոսային ծախս շահույթում կամ վնասում` հաշվեգրվելուն պես:

***(iii) Շահաբաժիններ***

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

**(ի) Հարկում**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին: Այդ դեպքում այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է` կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին և ազդեցություն չունեն հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի հիման վրա՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք կամ կարող է միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

## (ղ) Տոկոսային եկամուտ և ծախսեր, կոմիսիոն վճարների տեսքով եկամուտ և այլ վճարներ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում հաշվեգրվելու ժամանակ՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող դրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի կամ հավելավճարի ամորտիզացիան կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ժամկետի դրությամբ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված դրա գումարի միջև այլ տարբերությունները:

Այլ վճարները և կոմիսիոն վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

## (խ) Այլ ծախսեր

*Վարձակալության վճարներ*

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

Պայմանական վարձավճարները հաշվառվելու համար վերանայվում են նվազագույն վարձավճարները վարձակալության գործողության ժամկետի մնացորդային ժամանակահատվածի ընթացքում, երբ քիչ հավանական հանգամանքները այլևս գոյություն չունեն և վարձակալության գծով ճշգրտումը հայտնի է:

**(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտը կգործի 2015թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրապարակվի մի քանի փուլերով, և ենթադրվում է, որ կփոխարինի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»*: ՖՀՄՍ 9-ի առաջին մասը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2009թ. նոյեմբերին: Երկրորդ մասը, որը վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2010թ. հոկտեմբերին: Ակնկալվում է, որ ստանդարտի մնացած մասերը կիրապարակվեն 2012թ. ընթացքում: Ընկերությունն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց: Ընկերությունը մտադիր չէ կիրառել այս ստանդարտը ժամանակից շուտ:

- ՖՀՄՍ 13 *«Իրական արժեքի չափում»* ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը փոխարինում է առանձին ՖՀՄՍ-ներում ընդգրկված իրական արժեքի չափման ուղեցույցները և իրենից ներկայացնում է իրական արժեքի չափման մեկ ընդհանուր ուղեցույց: Այն տրամադրում է իրական արժեքի վերանայված սահմանումը, սահմանում է իրական արժեքի չափման հիմունքները և ներկայացնում է իրական արժեքի չափման համար պահանջվող բացահայտումները: ՖՀՄՍ 13 չի ներկայացնում նոր պահանջներ ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի չափման համար և չի բացառում գործնականում կիրառվող իրական արժեքի չափմանը վերաբերող բացառությունները, որոնք ներկայումս գոյություն ունեն որոշ ստանդարտներում: Ստանդարտը կիրառվում է հեռանկարային հիմունքով, և թույլատրվում է դրա ժամկետից շուտ կիրառումը: Համադրելի տեղեկատվության բացահայտում չի պահանջվում սկզբնական կիրառմանը նախորդող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

- ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում. Այլ համապարփակ եկամտի միավորների ներկայացում»* ստանդարտի փոփոխություն: Փոփոխությունը պահանջում է, որպեսզի կազմակերպությունն այլ համապարփակ եկամտի այն միավորները, որոնք ապագայում կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի, ներկայացնի շահույթ կամ վնաս չվերադասակարգվող միավորներից առանձին: Ի լրումն, այս փոփոխության համաձայն «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը» սկսվում է կոչվել «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»: Այնուամենայնիվ, թույլատրվում է այլ անվանումների օգտագործում: Փոփոխությունը պետք է կիրառվի հետադարձ հիմունքով 2012 հուլիսի 1-ից, և թույլատրվում է դրա ժամանակից շուտ կիրառումը: Փոփոխությունն ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

- Բազմաթիվ *«ՖՀՄՍ-ների կատարելագործումները»* դիտարկվել են առանձին՝ յուրաքանչյուր ստանդարտի հիմունքով: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հետ կապված հաշվառման փոփոխություններին, ուժի մեջ կմտնեն 2012թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

# 4 Ապահովագրական ռիսկի կառավարում

## (ա) Ռիսկի կառավարման նպատակները և ապահովագրական ռիսկի նվազեցման քաղաքականությունը

Ընկերության կողմից իրականացվող հիմնական ապահովագրական գործունեությունը ենթադրում է վնաս կրելու ռիսկ անհատների և կազմակերպությունների հետ իրականացվող գործառնություններից, որոնք ուղղակիորեն ենթարկվում են ռիսկին: Նման ռիսկերը կարող են վերաբերել գույքին, պարտավորություններին, դժբախտ պատահարներին, առողջությանը, բեռնափոխադրումներին և այլ վտանգներին, որոնք կարող են առաջանալ ապահովագրվող պատահարից: Արդյունքում, Ընկերության համար ռիսկի գործոն է հանդիսանում անորոշությունը, որը կապված է ապահովագրության պայմանագրի պահանջների ժամկետների և բարդության հետ: Հիմնական ռիսկը կայանում է նրանում, որ պահանջների հաճախականությունը և չափսը կարող է նախատեսվածից ավելի մեծ լինել: Ապահովագրվող պատահարները բնույթով պատահական են, և մեկ տարվա ընթացքում պատահարների փաստացի քանակը և չափը տարբերվում են ընդունված վիճակագրական մեթոդով գնահատվածներից:

Ապահովագրական գործունեություն իրականացնելիս Ընկերությունը ենթարկվում է նաև շուկայական ռիսկին: Ընկերությունն ապահովագրական ռիսկը կառավարում է ընդունված վիճակագրական մեթոդների, ռիսկերի կենտրոնացման վերաապահովագրման, անդերրայթինգի սահմանաչափերի, գործարքների հաստատման ընթացակարգերի, գնորոշման ուղեցույցների և առաջացող հիմնահարցերի վերահսկման միջոցով:

### *(i) Անդերրայթինգի ռազմավարություն*

Ընկերության անդերրայթինգի ռազմավարության նպատակը տարաբնույթության ապահովումն է, որի արդյունքում Ընկերության պորտֆելը ցանկացած պահի կներառի ոչ փոխկապակցվող ռիսկերի բազմաթիվ դասեր, և ռիսկի յուրաքանչյուր դասը, իր հերթին, անդրադարձ կգտնի մեծ քանակությամբ ապահովագրության պայմանագրերում: Ղեկավարությունը գտնում է, որ այս մոտեցումը նվազեցնում է արդյունքի փոփոխվելու հնարավորությունը:

Անդերրայթինգի ռազմավարությունը ներկայացվում է գործարար ծրագրում, որը սահմանում է ապահովագրման ենթակա բիզնեսի դասերը և ենթադասերը, ինչպես նաև տարածքը, որտեղ բիզնեսը պետք է ապահովագրվի: Ռազմավարությունն իրականացվում է անդերրայթինգի ուղեցույցների միջոցով, որոնք սահմանում են անդերրայթինգի մանրամասն կանոններ ծառայությունների յուրաքանչյուր տեսակի համար: Ուղեցույցներն անդրադառնում են ապահովագրություն հասկացությանը, համապատասխան ընթացակարգերին, ռիսկերի նկարագրերին, պայմաններին, իրավունքներին և պարտականություններին, փաստաթղթավորման պահանջներին, պայմանագրերի ձևերին/քաղաքականությունների օրինակներին, կիրառելի սակագների հիմնավորմանը և կիրառելի սակագների վրա ազդող գործոններին: Սակագների հաշվարկն իրականացնելիս հիմք են ընդունվում շահութաբերությունը և տատանումները:

Անդերրայթինգի ուղեցույցների պահպանումը կանոնավոր կերպով վերահսկվում է ղեկավարության կողմից:

***(ii) Վերաապահովագրության ռազմավարություն***

Ընկերությունը վերաապահովագրում է անդերրայթինգի ենթարկվող ռիսկերի մի մասը՝ վնասներ կրելու ռիսկը կառավարելու և կապիտալի ռեսուրսների անվտանգությունն ապահովելու նպատակով: Ընկերությունը հիմնականում գնում է ֆակուլտատիվ, քվոտային վերաապահովագրություն կամ ավելցուկի վերաապահովագրություն, ինչը թույլ է տալիս նվազեցնել ռիսկին զուտ ենթարկվածությունը 7,100-ից 50,000 հազար դրամի յուրաքանչյուր առանձին պայմանագրի համար կամ որոշ այլ սահմանված հանգամանքներում՝ կախված գործունեության ոլորտից:

Վերաապահովագրության փոխանցված պայմանագրերը ներառում են վարկային ռիսկ, և վերաապահովագրության գծով նման փոխհատուցումները ներկայացվում են անվճարունակության և անհավաքագրելիության հայտնի դեպքերի հետ կապված նվազեցումները կատարելուց հետո: Ընկերությունը կանոնավոր կերպով վերահսկում է վերաապահովագրվողների ֆինանսական վիճակը և պարբերաբար վերանայում է վերաապահովագրության պայմանները:

Ընկերությունը չի կիրառում վնասի առավելագույն շեմ ունեցող վերաապահովագրություն:

**(բ) Ապահովագրության պայմանագրերի պայմանները և ներառվող ռիսկերի բնույթը**

Ստորև ներկայացված են ապահովագրության պայմանագրերի այն պայմանները, որոնք էական ազդեցություն ունեն ապահովագրության պայմանագրերից առաջացող դրամական միջոցների ապագա հոսքերի ժամկետների և անորոշության վրա: Ի լրումն, ստորև ներկայացվածը թույլ է տալիս գնահատել Ընկերության հիմնական ծառայությունները և հարակից ռիսկերի կառավարման Ընկերության մեթոդները:

***(i) Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն***

***Ծառայության առանձնահատկությունները***

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրումը ներառում է ամբողջական համապարփակ ապահովագրություն (Կասկո), ճանապարհատրանսպորտային պատահարների ապահովագրություն (ՃՏՊ) և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն (ԱՊԱ): Կասկո պայմանագրերով կազմակերպություններին և անհատներին փոխհատուցվում է փոխադրամիջոցների հետ կապված կրած կամ դրանց հասցված վնասը: ՃՏՊ պայմանագրերով ուղևորներին և/կամ նրանց ժառանգներին փոխհատուցվում են մահվան կամ անձնական վնասվածքի հետ կապված գումարները: ԱՊԱ պայմանագրերով փոխադրամիջոցի սեփականատիրոջը փոխհատուցվում են այն գումարները, որոնք նա վճարում է երրորդ անձանց գույքը վնասելու, մահվան կամ վնասվածքների դեպքում: Այդ իսկ պատճառով, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը ներառում է համապատասխանաբար կարճ ու երկար ժամանակաշրջան ապահովագրական դեպք տեղի ունենալու և հատուցման վճարման միջև: Որպես կանոն առավել արագ վճարվում են այն պահանջները, որոնք փոխհատուցում են ապահովադրին մեքենայի ֆիզիկական վնասվածքի արդյունքում կրած վնասը: Պահանջները, որոնց վճարումն առավել երկար ժամանակ է պահանջում և որոնք առավել դժվար գնահատելի են, վերաբերում են մարմնական վնասվածքների հատուցումներին:

*Ռիսկերի կառավարումը*

Որպես կանոն, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն հետ կապված պահանջները ներկայացվում են ոչ մեծ հետաձգումներով, և պահանջների բարդությունը համեմատաբար մեծ չէ: Ընդհանուր առմամբ գործունեության այս ոլորտի պահանջների պարտավորություններն առաջացնում են միջին չափի ռիսկ: Ընկերությունը վերահսկում է և արձագանքում է վերանորոգման ծախսերի, վնասվածքների փոխհատուցման, գողությունների հաճախականության և դժբախտ պատահարների հետ կապված պահանջների շարժին ու միտումների փոփոխություններին:

Պահանջների ներկայացման հաճախականության վրա ազդում են անբարենպաստ եղանակային պայմանները. պահանջների քանակն ավելի մեծ է լինում ձմռան ամիսներին:

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության տեսակները ենթարկվում են անդերրայթինգի՝ ելնելով դժբախտ պատահարների վիճակագրական տվյալներից: Ընկերությունը վերաապահովագրում է Կասկո ռիսկերը քվոտային վերաապահովագրության միջոցով, որի արդյունքում վերջանական զուտ վնասը յուրաքանչյուր դեպքի համար սահմանափակվում է 37,100 հազար դրամով:

*(ii) Բժշկական ապահովագրություն*

*Ծառայության առանձնահատկությունները*

Այս պայմանագրերով Ընեկրությունը փոխհատուցում է բուժման և հիվանդանոցի ծախսերը: Այս պորտֆելը ներառում է թե անհատական ապահովագրության և թե կազմակերպությունների կորպորատիվ ապահովագրության փաթեթները:

*Ռիսկերի կառավարումը*

Առողջության ապահովագրությունը կախված է բուժման անհրաժեշտության առաջացումից: Այս պայմանագրերի հետ կապված ռիսկը Ընկերությունը վերահսկում բժշկական ստուգման միջոցով: Արդյունքում, գները որոշելիս հաշվի են առնվում ապահովագրվողի ներկա առողջական վիճակը և ընտանիքի բժշկական պատմությունը:

*(iii) Գույքի ապահովագրություն*

*Ծառայության առանձնահատկությունները*

Ընկերությունը կատարում է գույքի ապահովագրություն: Այս ծառայությունը ներառում է ինչպես անձնական, այնպես էլ՝ արտադրական գույքի ապահովագրություն: Գույքի ապահովագրությունը փոխհատուցում է ապահովադրին, որոշակի սահմանափակումներով կամ ավելցուկներով, նյութական գույքին հասցված կամ դրա հետ կապված կրած վնասը:

Շենքերին կամ դրանց պարունակությանը հասցված վնասի փոխհատուցման պահանջի համար հիմք հանդիսացող պատահարը սովորաբար հանկարծակի է տեղի ունենում (հրդեհ և անօրինական ներխուժում) և պատճառը հեշտ որոշելի է: Այդպիսով, պահանջը ներկայացվում է կարճ ժամկետներում և կարող է կարգավորվել առանց հետաձգումների: Այդ իսկ պատճառով, գույքի ապահովագրությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ՝ ըստ պահանջի ներկայացման և կարգավորման միջև ժամանակահատվածի:

*Ռիսկերի կառավարումը*

Ծառայության հետ կապված հիմնական ռիսկերն են անդերրայթինգի ռիսկը, մրցակցության ռիսկը և պահանջների ներկայացման ռիսկը (ներառյալ բնական աղետներ տեղի ունենալու փոփոխական հավանականությունը): Գույքի ապահովագրության հետ կապված Ընկերությունը ենթարկվում է նաև այնպիսի ռիսկի, որը կարող է առաջանալ պահանջներ ներկայացնողների կողմից կորստի չափի արհեստականորեն մեծացման կամ անբարեխիղճ վարքի դեպքում:

Անդերրայթինգի ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի հավաքագրի անհրաժեշտ ապահովագրավճարներն իր կողմից ապահովագրված տարբեր գույքերի գծով: Անձնական գույքի ապահովագրության դեպքում ակնկալվում է, որ առկա կլինեն համանման ռիսկ ներառող գույքի մեծ թվով տեսակներ: Այնուամենայնիվ, այս մոտեցումը չի գործում կոմերցիոն բիզնեսի համար: Կոմերցիոն գույքի համար ներկայացվող առաջարկները ներառում են վայրի, գործունեության տեսակի և անվտանգության միջոցառումների յուրահատուկ համադրություն: Այս ռիսկերին համաչափ ապահովագրավճարների հաշվարկը սուբյեկտիվ է, այսպիսով նաև՝ ռիսկային:

Այս ռիսկերը հիմնականում կառավարվում են գնագոյացման և վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը կիրառում է անդերրայթինգի խիստ չափանիշներ՝ վնաս կրելու ռիսկն Ընկերության համար ընդունելի դարձնելու համար: Ընկերությունը վերաապահովագրում է գույքի ապահովագրման հետ կապված ռիսկերը ավելցուկի վերաապահովագրության միջոցով, որը սահմանափակում է Ընկերության վնասի չափը մինչև 50,000 հազար դրամը յուրաքանչյուր արտադրական գույքի ապահովագրության պայմանագրի և յուրաքանչյուր անձնական գույքի ապահովագրության պայմանագրի համար:

## (գ) Ապահովագրական ռիսկի կենտրոնացում

Ընկերության ապահովագրական ռիսկի առանցքային ասպեկտը դա ապահովագրական ռիսկի կենտրոնացումն է, որը կարող է առաջանալ, երբ առանձին պատահարը կամ պատահարների շարքը կարող է զգալի ազդեցություն ունենալ Ընկերության պարտավորությունների վրա: Նման կենտրոնացումները կարող են առաջանալ ապահովագրության մեկ առանձին պայմանագրից կամ համանման ռիսկային առանձնահատկություններով մի շարք փոխկապակցված պայամանագրերից և վերաբերում այն հանգամանքներին, որոնք կարող են տեղիք տալ զգալի պարտավորությունների: Ապահովագրական ռիսկի կենտրոնացման կարևոր ասպեկտն այն է, որ դա կարող է առաջանալ մի շարք առաձին դասերի կամ պայմանագրերի շարքի հետ կապված ռիսկերի կուտակումից:

Ռիսկերի կենտրոնացումը կարող է առաջանալ բարդ հետևանքներով, փոքր հաճախականությամբ պատահարներից, այդ թվում՝ բնական աղետներից և այնպիսի իրավիճակներում, որտեղ անդերրայթինգն ուղղված է առանձին խմբին, օրինակ՝ առանձին աշխարհագրական տարածաշրջանին:

Այս ռիսկերի կառավարման համար Ընկերության կողմից կիրառվող հիմնական մեթոդները երկու կողմ ունեն: Առաջինը, ռիսկը կառավարվում է համապատասխան անդերրայթինգի միջոցով: Անդերրայթերներին չի թույլատրվում անդերրայթինգի ենթարկել ռիսկերը, եթե ակնկալվող շահույթը համաչափ չէ ենթադրվող ռիսկերին: Երկրորդը, ռիսկը կառավարվում է վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը ձեռք է բերում վերաապահովագրություն ավտոտրանսպորտային միջոցների և գույքի ապահովագրման իր տարբեր դասերի համար: Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է վերաապահովագրության հետ կապված ծախսերը և օգուտները:

### (դ) Վերաապահովագրական ռիսկ

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկը անհատական և պորտֆելի ռիսկերը ներառող բազմաթիվ պայմանագրերի գծով անդերրայթինգի հետ կապված վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության այս պայմանագրերը տարածում են ռիսկը և նվազագույնի են հասցնում վնասի հետևանքները: Յուրաքանչյուր ռիսկի գումարը կախված է առանձին ռիսկի Ընկերության գնահատականից, սակայն, ամեն դեպքում, չի գերազանցում 50,000 հազար դրամը ցանկացած պայմանագրի համար:

Վերաապահովագրության պայմանագրերի պայմաններով վերաապահովագրողը համաձայնվում է փոխհատուցել փոխանցված գումարը պահանջը վճարելու դեպքում: Այնուամենայնիվ, Ընկերությունը շարունակում է պարտավորություն կրել իր ապահովադիրների առջև փոխանցված ապահովագրության հետ կապված, եթե վերաապահովագրողին չհաջողվի կատարել ստանձնած պարտականությունները:

Վերաապահովագրողին ընտրելիս Ընկերությունը հաշվի է առնում դրանց վճարունակությունը: Վերաապահովագրողի վճարունակությունը գնահատվում է հրապարակային վարկանիշային և ներքին հետազոտությունների արդյունքում ձեռքբերված տվյալների հիման վրա:

### (ե) Պահանջների զարգացում

Պահանջների զարգացման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է Ընկերության ապահովագրական ռիսկը լուսաբանելու նպատակով: Աղյուսակներում համեմատվում են պատահարի տարվա ընթացքում վճարված պահանջներն այդ պահանջների գծով ձևավորված պահուստների հետ: Աղյուսակի վերին մասում ներկայացվում է կուտակային պահանջների ներկա գնահատականը և ցուցադրվում են գնահատված պահանջների փոփոխությունները հետագա հաշվետու տարում կամ պատահարի տարվա վերջում: Գնահատված գումարը ավելանում կամ նվազում է վնասների վճարմանը զուգահեռ, և երբ ավելի մեծ ծավալով տեղեկատվություն է հայտնի դառնում չվճարված պահանջների բարդության ու հաճախականության մասին: Աղյուսակի ստորին մասում ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ընդհանուր պահուստի և կուտակային պահանջների գնահատականի համադրումը:

Այս բաժինը ներառում է նաև առանձին պահանջների զարգացմանաղյուսակները Ընկերության ապահովագրական գործունեության հիմնական դասերի համար:

Թեև աղյուսակներում բերվող տեղեկատվությունը ներկայացնում է չվճարված պահանջների գնահատականի համարժեքությունն անցյալի փորձի տեսանկյունից, ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները նախազգուշացվում են ներկա չվճարված վնասի մնացորդի վրա նախկին ավելցուկի կամ պակասորդի էքստրապոլյացիայի մասին: Ընկերությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել 2011թ. վերջի դրությամբ վճարման ենթակա ընդհանուր պահանջները: Այնուամենայնիվ, ելնելով պահուստավորման գործընթացին բնորոշ անորոշություններից, հնարավոր չէ միանշանակորեն հաստատել, որ մնացորդները ի վերջո համապատասխանորեն գնահատված կլինեն:

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) - Ընդամենը**

| | Պատահարի տարի | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2009թ.** | **2010թ.** | **2011թ.** | **Ընդամենը** |
| **Կուտակային պահանջների գնահատական** | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 32,284 | 189,228 | 935,652 | - |
| - մեկ տարի անց | 35,405 | 213,315 | - | - |
| - երկու տարի անց | 35,405 | - | - | - |
| Կուտակային պահանջների գնահատական | 35,405 | 213,315 | 935,652 | 1,184,372 |
| Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը | (35,405) | (213,315) | (773,934) | (1,022,654) |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **-** | **-** | **161,718** | **161,718** |

Ստորև ներկայացված է պահանջների զարգացման վերլուծությունն ըստ գործունեության հիմնական ոլորտների:

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն**

| | Պատահարի տարի | |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **2011թ.** | **Ընդամենը** |
| **Կուտակային պահանջների գնահատական** | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 870,366 | - |
| Կուտակային պահանջների գնահատական | 870,366 | 870,366 |
| Կատարված կուտակային վճարումները հաշվետու ամսաթվի դրությամբ | (713,291) | (713,291) |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **157,075** | **157,075** |

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (Կասկո)**

| | Պատահարի տարի | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2009թ.** | **2010թ.** | **2011թ.** | **Ընդամենը** |
| **Կուտակային պահանջների գնահատական** | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 11,224 | 85,335 | 50,114 | - |
| - մեկ տարի անց | 11,947 | 88,149 | - | - |
| - երկու տարի անց | 11,947 | - | - | - |
| Կուտակային պահանջների գնահատական | 11,947 | 88,149 | 50,114 | 150,210 |
| Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը | (11,947) | (88,149) | (49,856) | (149,952) |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **-** | **-** | **258** | **258** |

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) - Բժշկական ապահովագրություն**

| | Պատահարի տարի | | |
|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2010թ.** | **2011թ.** | **Ընդամենը** |
| **Կուտակային պահանջների գնահատական** | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 90,242 | 11,136 | - |
| - մեկ տարի անց | 111,228 | - | - |
| Կուտակային պահանջների գնահատական | 111,228 | 11,136 | 122,364 |
| Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը | (111,228) | (9,632) | (120,860) |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **-** | **1,504** | **1,504** |

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Գույքի ապահովագրություն**

| | Պատահարի տարի | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2009թ.** | **2010թ.** | **2011թ.** | **Ընդամենը** |
| **Կուտակային պահանջների գնահատական** | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 19,953 | 4,120 | 772 | - |
| - մեկ տարի անց | 22,361 | 4,120 | - | - |
| - երկու տարի անց | 22,361 | - | - | - |
| Կուտակային պահանջների գնահատական | 22,361 | 4,120 | 772 | 27,253 |
| Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը | (22,361) | (4,120) | (458) | (26,939) |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **-** | **-** | **314** | **314** |

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Այլ**

| | Պատահարի տարի | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2009թ.** | **2010թ.** | **2011թ.** | **Ընդամենը** |
| **Կուտակային պահանջների գնահատական** | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 1,107 | 9,531 | 3,264 | - |
| - մեկ տարի անց | 1,097 | 9,818 | - | - |
| - երկու տարի անց | 1,097 | - | - | - |
| Կուտակային պահանջների գնահատական | 1,097 | 9,818 | 3,264 | 14,179 |
| Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը | (1,097) | (9,818) | (697) | (11,612) |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **-** | **-** | **2,567** | **2,567** |

# 5 Ապահովավճարներ

2011թ.

| հազ. դրամ | Ավտո-տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն | Ավտոմեքենաների ապահո-վագրություն (Կասկո) | Բժշկական ապահո-վագրություն | Գույքի ապահո-վագրություն | Շինարա-րության ապահո-վագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համախառն ապահովագրավճարներ՝ առանց զեղչերի | 2,071,700 | 66,062 | 28,248 | 189,346 | - | 46,734 | 2,402,090 |
| Չեղյալ հայտարարված ապահովագրավճարներ | (30,882) | (1,060) | (1,180) | (143) | - | (5,652) | (38,917) |
| | **2,040,818** | **65,002** | **27,068** | **189,203** | **-** | **41,082** | **2,363,173** |
| Չվաստակած ապահովագրավճարների ընդհանուր պահուստի փոփոխություն | (252,892) | 15,638 | (4,447) | (35,495) | 16,256 | 7,710 | (253,230) |
| **Համախառն վաստակած ապահովագրավճարներ** | **1,787,926** | **80,640** | **22,621** | **153,708** | **16,256** | **48,792** | **2,109,943** |
| Հանած՝ վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները | - | (23,384) | - | (112,504) | - | (17,844) | (153,732) |
| Վերաապահովագրողների բաժինը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում | - | (5,648) | - | 36,316 | (13,303) | 1,453 | 18,818 |
| **Փոխանցված վաստակած ապահովագրավճարներ** | **-** | **(29,032)** | **-** | **(76,188)** | **(13,303)** | **(16,391)** | **(134,914)** |
| **Զուտ վաստակած ապահովագրավճարներ** | **1,787,926** | **51,608** | **22,621** | **77,520** | **2,953** | **32,401** | **1,975,029** |

**2010թ.**

| հազ. դրամ | Ավտո-տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն | Ավտոմեքենաների ապահո-վագրություն (Կասկո) | Բժշկական ապահո-վագրություն | Գույքի ապահո-վագրություն | Շինարա-րության ապահո-վագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համախառն ապահովագրավճարներ՝ առանց զեղչերի | - | 96,431 | 87,555 | 133,943 | 80,611 | 80,913 | 479,453 |
| Զեղյալ հայտարարված ապահովագրավճարներ | - | (199) | (3,319) | (119) | - | (1,361) | (4,998) |
| | **-** | **96,232** | **84,236** | **133,824** | **80,611** | **79,552** | **474,455** |
| Չվաստակած ապահովագրավճարների ընդհանուր պահուստի փոփոխություն | - | 9,267 | (9,041) | 3,661 | (42,233) | (23,029) | (61,375) |
| **Համախառն վաստակած ապահովագրավճարներ** | **-** | **105,499** | **75,195** | **137,485** | **38,378** | **56,523** | **413,080** |
| Հանած՝ վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները | - | (30,074) | - | (68,389) | (66,462) | (18,109) | (183,034) |
| Վերաապահովագրողների բաժինը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում | - | 3,746 | - | (9,841) | 33,708 | 9,426 | 37,039 |
| **Փոխանցված վաստակած ապահովագրավճարներ** | **-** | **(26,328)** | **-** | **(78,230)** | **(32,754)** | **(8,683)** | **(145,995)** |
| **Զուտ վաստակած ապահովագրավճարներ** | **-** | **79,171** | **75,195** | **59,255** | **5,624** | **47,840** | **267,085** |

«Այլ» դասում ներառված ապահովագրավճարներն իրենցից ներկայացնում են ճանապարհորդության, բեռնափոխադրումների, անձնական դժբախտ պատահարների, ֆինանսական վնասի և պարտավորության ապահովագրությունների գծով ապահովագրավճարները:

# 6 Պահանջներ

**2011թ.**

| **հազ. դրամ** | **Ավտո-տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն** | **Ավտոմեքենաների ապահո-վագրություն (Կասկո)** | **Բժշկական ապահո-վագրություն** | **Գույքի ապահո-վագրություն** | **Շինարա-րության ապահո-վագրություն** | **Այլ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| Փաստացի պահանջներ | 712,207 | 48,291 | 45,968 | 458 | - | 1,773 | **808,697** |
| Վերաապահովագրողների բաժինը փաստացի պահանջներում | - | (26,247) | - | (458) | - | (65) | (26,770) |
| **Կարգավորված պահանջներ՝ առանց վերաապահովագրության** | **712,207** | **22,044** | **45,968** | **-** | - | **1,708** | 781,927 |
| Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստների փոփոխություն | 7,826 | 364 | 301 | (900) | - | (1,058) | **6,533** |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստների փոփոխություն | - | (35,808) | (9,121) | - | - | (7,432) | **(52,361)** |
| Ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստների փոփոխություն | 157,074 | (4,795) | (36,575) | 442 | - | 2,012 | **118,158** |
| | **164,900** | **(40,239)** | **(45,395)** | **(458)** | **-** | **(6,478)** | 72,330 |
| Պահանջների պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն | - | 369 | - | - | - | - | **369** |
| **Ապահովագրության պայմանագրի պահուստների փոփոխություն** | **164,900** | **(39,870)** | **(45,395)** | **(458)** | **-** | **(6,478)** | 72,699 |
| **Զուտ փաստացի պահանջներ** | **877,107** | **(17,826)** | **573** | **(458)** | **-** | **(4,770)** | **854,626** |

**2010թ.**

| հազ. դրամ | Ավտո-տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն | Ավտոմեքենաների ապահո-վագրություն (Կասկո) | Բժշկական ապահո-վագրություն | Գույքի ապահո-վագրություն | Շինարա-րության ապահո-վագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Փաստացի պահանջներ | - | 84,082 | 52,163 | 26,481 | - | 9,215 | 171,941 |
| Վերաապահովագրողների բաժինը փաստացի պահանջներում | - | (15,382) | - | (15,390) | - | (1,388) | (32,160) |
| **Կարգավորված պահանջներ՝ առանց վերաապահովագրության** | **-** | **68,700** | **52,163** | **11,091** | **-** | **7,827** | **139,781** |
| Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստների փոփոխություն | - | 1,117 | 2,675 | (1,052) | - | 1,163 | 3,903 |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստների փոփոխություն | - | 35,808 | 9,121 | - | - | 7,432 | 52,361 |
| Ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստների փոփոխություն | - | 1,976 | 38,079 | (19,953) | - | 306 | 20,408 |
| | **-** | **38,901** | **49,875** | **(21,005)** | **-** | **8,901** | **76,672** |
| Պահանջների պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն | - | (142) | - | 11,718 | - | - | 11,576 |
| **Ապահովագրության պայմանագրի պահուստների փոփոխություն** | **-** | **38,759** | **49,875** | **(9,287)** | **-** | **8,901** | **88,248** |
| **Զուտ փաստացի պահանջներ** | **-** | **107,459** | **102,038** | **1,804** | **-** | **16,728** | **228,029** |

«Այլ» դասում ներառված ապահովագրավճարներն իրենցից ներակայացնում են ճանապարհորդության, բեռնափոխադրումների, անձնական դժբախտ պատահարների և պարտավորության ապահովագրությունների գծով ապահովագրավճարները:

## 7 Հետաձգված ձեռքբերման ծախսումներ

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| **Գործակալներին վճարված կոմիսիոն գումարներ** | | |
| ԱՊՊԱ | 262,295 | 211,658 |
| Կասկո | 4,477 | 270 |
| Բժշկական ապահովագրություն | 12,055 | 12,400 |
| Գույքի ապահովագրություն | 15,878 | 279 |
| Այլ | 4,687 | 628 |
| **Ընդամենը ձեռքբերման ծախսումներ** | **299,392** | **225,235** |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումների փոփոխություն | 10,271 | (170,155) |
| **Ձեռքբերման ծախսումները տարվա համար** | **309,663** | **55,080** |

**Հետաձգված ձեռքբերման ծախսումների շարժի վերլուծություն**

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Հետաձգված ձեռքբերման ծախսումները տարեսկզբի դրությամբ | 170,155 | - |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումների փոփոխություն | (10,271) | 170,155 |
| **Հետաձգված ձեռքբերման ծախսումները տարեվերջի դրությամբ** | **159,884** | **170,155** |

## 8 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| **Ֆինանսական եկամուտ** | | |
| Տոկոսային եկամուտ | | |
| - բանկերում տեղաբաշխված միջոցներից | 203,663 | 83,662 |
| - մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներից | 14,370 | 876 |
| - տրված վարկերից | 11,234 | 410 |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 38,441 | - |
| | **267,708** | **84,948** |
| **Ֆինանսական ծախսեր** | | |
| Տոկոսային ծախս | | |
| - վարկերի և փոխառությունների գծով | (6,770) | - |
| - այլ ֆինանսական պարտավորությունների գծով | (3,338) | - |
| Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից | - | (78,589) |
| | **(10,108)** | **(78,589)** |

# 9 Վարչական ծախսեր

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցումներ և աշխատավարձին վերաբերող հարկեր | 522,039 | 183,530 |
| Վարձակալության ծախսեր | 79,824 | 29,015 |
| Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի անդամակցության վճարներ և այլ հատկացումներ | 58,972 | 25,500 |
| Գովազդ | 44,113 | 41,042 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 27,712 | 17,437 |
| Տույժեր և տուգանքներ | 25,226 | 1,750 |
| Պահպանման ծախսեր | 23,451 | 11,676 |
| Տրանսպորտի և գործուղման ծախսեր | 21,967 | 13,824 |
| Հաղորդակցության ծախսեր | 21,583 | 9,518 |
| Գրասենյակային ծախսեր | 20,515 | 9,879 |
| Գրասենյակային պիտույքներ | 13,309 | 9,714 |
| Աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ | 9,800 | 12,600 |
| Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | 4,015 | 2,108 |
| Այլ վարչական ծախսեր | 4,686 | 2,341 |
| | **877,212** | **369,934** |

# 10 Արժեզրկման գծով կորուստ

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 76,356 | 4,286 |
| Այլ | (3,415) | 11,482 |
| | **72,941** | **15,768** |

# 11 Շահութահարկ

Ընկերությունը շահութահարկը վճարում է ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով (2010թ-ին՝ 20%):

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| ***Ընթացիկ հարկի գծով ծախս*** | | |
| Ընթացիկ տարվա ծախս | - | - |
| ***Հետաձգված հարկի գծով արտոնություն*** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 21,837 | (52,126) |
| Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն | (72,654) | 52,126 |
| | **(50,817)** | **-** |

**Արդյունավետ հարկային դրույքի համադրում**

| | 2011թ. | | 2010թ. | |
|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **%** | **հազ. դրամ** | **%** |
| Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը | 107,125 | 100.0 | (372,354) | 100.0 |
| Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով | 21,426 | 20.0 | (74,471) | 20.0 |
| Չնվազեցվող/չհարկվող միավորներ | 411 | 0.4 | 22,345 | (6.0) |
| Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն | (72,654) | (67.8) | 16,800 | (4.5) |
| Ընթացիկ տարվա վնաս, որի գծով հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել | - | - | 35,326 | (9.5) |
| | **(50,817)** | **(47.4)** | **-** | **-** |

# 12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | | |
| - 10 խոշորագույն հայկական բանկեր | 80,943 | 113,325 |
| - այլ հայկական բանկեր | 49,770 | 56,749 |
| Կանխիկը դրամարկղում | 4,552 | 61,338 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում** | **135,265** | **231,412** |

Բանկերում պահվող ընթացիկ հաշիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Բանկերում պահվող ընթացիկ հաշիվները ներառում են կապակցված կողմերի հետ գործարքների 41,594 հազար դրամ գումարով մնացորդ (31 դեկտեմբերի 2010թ.` 106,964 հազար դրամ):

## 13 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| 10 խոշորագույն հայկական բանկեր | 1,141,733 | 1,650,234 |
| Այլ հայկական բանկեր | 733,353 | 281,627 |
| | **1,875,086** | **1,931,861** |

Բանկերում տեղաբաշխված միջոցները ներառում են ժամկետային ավանդները: Բանկերում տեղաբաշխված միջոցները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Բանկերում տեղաբաշխված միջոցները ներառում են կապակցված կողմերի հետ գործարքների 251,935 հազար դրամ գումարով մնացորդ (31 դեկտեմբերի 2010թ.` 293,485 հազար դրամ):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 10 խոշորագույն հայկական բանկերում տեղաբաշխված 200,000 հազար դրամ գումարով ժամկետային ավանդները գրավադրվել էին վարկերի և փոխառությունների դիմաց (2010թ-ին` զրո):

**Բանկերում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում**

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը միջոցներ ունի տեղաբաշխված վեց բանկում (31 դեկտեմբերի 2010թ.` վեց բանկում), որոնց մնացորդները գերազանցում են Ընկերության սեփական կապիտալի 10%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 1,636,336 հազար դրամ (2010թ-ին` 1,577,145 հազար դրամ):

## 14 Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| Գործակալներից ստացվելիք գումարներ` առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից | 733,007 | 358,041 |
| Ապահովադիրներից ստացվելիք գումարներ` առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից | 62,542 | 83,174 |
| Վերաապահովագրության գործառնություններից ստացվելիք գումարներ | 2,192 | 30,777 |
| Արժեզրկման գծով պահուստ | (65,385) | (5,757) |
| | **732,356** | **466,235** |

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման գծով պահուստը վերաբերում է ուղղակի ապահովագրության գործառնություններից առաջացած գործակալներից ստացվելիք գումարներին:

Ընկերությունը չի ենթարկվում էական վարկային ռիսկի ուղղակի ապահովագրության գործառնությունների արդյունքում ապահովադիրներից ստացվելիք գումարների հետ կապված, քանի որ ապահովագրության պայմանագիրը չեղյալ է հայտարարվում, որի հետ մեկտեղ չեղյալ է հայտարարվում նաև ապահովագրության պայմանագրին վերաբերող չվաստակած ապահովագրավճարների պահուստը, եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովադիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը:

**(ա) Արժեզրկմնա գծով պահուստի շարժի վերլուծություն**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը 2011թ. և 2010թ. ընթացքում:

| | 31 դեկտեմբերի 2011թ. | 31 դեկտեմբերի 2011թ. |
|---|---|---|
| Մնացորդը տարեսկզբին | 5,757 | 1,471 |
| Զուտ ծախս | 76,356 | 4,286 |
| Դուրս գրումներ | (16,728) | - |
| **Մնացորդը տարեվերջին** | **65,385** | **5,757** |

**(բ) Գործակալներից ստացվելիք գումարների արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ**

Գործակալներից ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում հետևյալ հիմնական ենթադրություններով.

- Յուրաքանչյուր գործակալներից ստացվելիք գումարների գծով ակնկալվող դրամական միջոցների հոսքերը կարող են գնահատվել վերջին 24 ամիսների միտումների հիման վրա:
- Ստացվելիք գումարների գծով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի զեղչման համար կիրառվում է 24% զեղչի դրույք:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ գործակալներից ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստի վրա: Եթե դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի մեկ տոկոսով, ապա գործակալներից ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստի գումարը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 6,672 հազար դրամով (2010թ-ին՝ կնվազի/կավելանա 3,523 հազար դրամով): Եթե զեղչի դրույքը փոփոխվի մեկ տոկոսով, ապա գործակալներից ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստի գումարը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 728 հազար դրամով (2010թ-ին՝ կնվազի/կավելանա 64 հազար դրամով):

# 15 Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ

| 2011թ.<br>հազ. դրամ | Համախառն | Վերաապահո-<br>վագրություն | Զուտ |
|---|---|---|---|
| Չվաստակած ապահովագրավճարներ | 475,102 | (134,066) | 341,036 |
| Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ | 13,723 | - | 13,723 |
| Տեղեկացված պահանջների պահուստ | 161,718 | (103) | 161,615 |
| Ընդամենը ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | **650,543** | **(134,169)** | **516,374** |
| | | | |
| Ընթացիկ | 617,367 | (107,575) | 509,792 |
| Ոչ ընթացիկ | 33,176 | (26,594) | 6,582 |
| | **650,543** | **(134,169)** | **516,374** |

| 2010թ.<br>հազ. դրամ | Համախառն | Վերաապահո-<br>վագրություն | Զուտ |
|---|---|---|---|
| Չվաստակած ապահովագրավճարներ | 221,872 | (115,248) | 106,624 |
| Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ | 7,190 | - | 7,190 |
| Տեղեկացված պահանջների պահուստ | 43,560 | (472) | 43,088 |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստ | 52,361 | - | 52,361 |
| Ընդամենը ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | **324,983** | **(115,720)** | **209,263** |
| | | | |
| Ընթացիկ | 261,167 | (74,838) | 186,329 |
| Ոչ ընթացիկ | 63,816 | (40,882) | 22,934 |
| | **324,983** | **(115,720)** | **209,263** |

## (ա) Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների շարժի վերլուծություն (ներառյալ վերաապահովագրությունը)

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Մնացորդն առ 1 հունվարի | 324,983 | 186,936 |
| Համախառն ապահովագրավճարներ (ծնթգ. 5) | 2,402,090 | 479,453 |
| Չեղյալ հայտարարված ապահովագրավճարներ (ծնթգ. 5) | (38,917) | (4,998) |
| Համախառն վաստակած ապահովագրավճարներ (ծնթգ. 5) | (2,109,943) | (413,080) |
| Նախորդ տարվա պահանջներից վերաբերող գնահատականների փոփոխություն և վճարումներ | (50,750) | (26,439) |
| Ընթացիկ տարվա պահանջների ակնկալվող ծախսը | 175,441 | 50,750 |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստի աճ/(նվազում) | (52,361) | 52,361 |
| Մնացորդն առ 31 դեկտեմբերի | **650,543** | **324,983** |

**(բ) Չվաստակած ապահովագրավճարների պահուստների շարժի վերլուծություն (ներառյալ վերաապահովագրությունը)**

| **հազ. դրամ** | 2011 | 2010 |
|---|---|---|
| Մնացորդն առ 1 հունվարի | **221,872** | **160,497** |
| Համախառն ապահովագրավճարներ (ծնթգ. 5) | 2,402,090 | 479,453 |
| Զեղյալ հայտարարված ապահովագրավճարներ (ծնթգ. 5) | (38,917) | (4,998) |
| Համախառն վաստակած ապահովագրավճարներ (ծնթգ. 5) | (2,109,943) | (413,080) |
| Մնացորդն առ 31 դեկտեմբերի | **475,102** | **221,872** |

**(գ) Պահանջների պահուստների շարժի վերլուծություն (ներառյալ վերաապահովագրությունը)**

| **հազ. դրամ** | 2011 | 2010 |
|---|---|---|
| Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների մնացորդը առ 1 հունվարի | 7,190 | 3,287 |
| Տեղեկացված պահանջների պահուստի մնացորդը առ 1 հունվարի | 43,560 | 23,152 |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստի մնացորդը առ 1 հունվարի | 52,361 | - |
| **Պահանջների պահուստի ընդհանուր մնացորդը առ 1 հունվարի** | **103,111** | **26,439** |
| Նախորդ տարվա պահանջներին վերաբերող գնահատականների փոփոխություն և վճարումներ | (50,750) | (26,439) |
| Ընթացիկ տարվա պահանջների ակնկալվող ծախսը | 175,441 | 50,750 |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստի աճ/(նվազում) | (52,361) | 52,361 |
| **Պահանջների պահուստի ընդհանուր մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **175,441** | **103,111** |
| Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների մնացորդը առ 31 դեկտեմբերի | 13,723 | 7,190 |
| Տեղեկացված պահանջների պահուստի մնացորդը առ 31 դեկտեմբերի | 161,718 | 43,560 |
| Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստի մնացորդը առ 31 դեկտեմբերի | - | 52,361 |

**(դ) Ենթադրություններ և զգայունության վերլուծություն**

***Ենթադրությունների որոշման գործընթաց***

Ակնկալվում է, որ ապահովագրության գծով ակտիվների և պարտավորությունների գնահատման համար օգտագործվող ենթադրությունները կհանգեցնեն պահուստների ձևավորմանը, որոնք բավարար կլինեն ապահովագրության պայմանագրերի գծով առաջացող պարտավորությունները կատարելու համար՝ այնքանով, որքանով դրանք կարելի է կանխատեսել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով չվճարված պահանջների գծով պահուստի ձևավորման հետ կապված անորոշությունը, հավանական է, որ վերջնական արդյունքը տարբեր կլինի նախապես որոշված պարտավորություններից:

Պահուստը ձևավորվում է հաշվետու ամսաթվի դրությամբ առ այդ ամսաթիվը տեղի ունեցած պատահարների բոլոր պահանջների (լինեն դրանք ներկայացված, թե՝ ոչ) մարման համար պահանջվող վերջնական ծախսի համար, ներառյալ արտաքին պահանջների մարման ծախսերը՝ հանած արդեն իսկ վճարված գումարները:

Պահանջների գծով պահուստը չի զեղչվում փողի ժամանակային արժեքի հետ կապված:

Որպես ենթադրությունների ելքային տվյալներ սովորաբար օգտագործվում Ընկերության ներքին աղբյուրների տվյալները: Ենթադրությունները ստուգվում են դիտարկելի շուկայական տեղեկատվության կամ այլ հրապարակված տեղեկատվության հետ դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների գնահատումը որպես կանոն ենթադրում է ավելի մեծ անորոշություն, քան արդեն իսկ տեղեկացված պահանջների գնահատումը, երբ առկա է ավելի մեծ ծավալով տեղեկատվություն: Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջները, հաճախ հայտնի են դառնում Ընկերությանը պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո որոշ ժամանակ անց: Ընկերության պորտֆելի կարճաժամկետ բնույթի պատճառով, պահանջների բավականին մեծ մասը կարգավորվում է պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո մեկ տարվա ընթացքում:

Չվճարված պահանջների ծախսը և տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստները գնահատվում են կիրառելով մի շարք վիճակագրական մեթոդներ: Այս մեթոդները էքստրապոլյացիայի են ենթարկում վճարված և փաստացի պահանջների զարգացումը, մեկ պահանջի միջին ծախսը և պահանջների վերջնական քանակը պատահարի յուրաքանչյուր տարվա համար՝ հիմք ընդունելով նախորդ տարիների դիտարկելի փոփոխությունները և ակնկալվող վնասի հարաբերակցությունները:

Կիրառվող հիմնական վիճակագրական մեթոդներն են.

- Աստիճանային շղթայական մեթոդը, որը ենթադրում է նախորդ տարիների տվյալների օգտագործում որոշակի ամսաթվի դրությամբ պահանջների գծով վերջնական ծախսերի վճարված և փաստացի հարաբերակցությունը գնահատելու համար,
- Ակնկալվող վնասի հարաբերակցության մեթոդը, որի հիմքում ընկած են բիզնեսի գործունեության յուրաքանչյուր տեսակի գծով վնասի դրույքի Ընկերության ակնկալիքները,
- Համեմատական մեթոդը, որն օգտագործում է համադրելի, ավելի մեծ ժամկետով դասերի փորձը պահանջների գծով ծախսերը գնահատելու համար,
- Bornhuetter-Ferguson մեթոդը, որն իրենից ներկայացնում է աստիճանային շղթայական մեթոդի և ակնկալվող վնասի հարաբերակցության մեթոդի համակցությունը:

Փաստացի մեթոդը կամ մեթոդների համակցության կիրառումը կախված է ապահովագրության պայմանագրի դասից՝ հիմք ընդունելով նախկին տարիների պահանջների դիտարկելի փոփոխությունները:

Խոշոր պահանջները որպես կանոն գնահատվում են առանձին և չափվում են առանձին դեպքերի հիմունքով, կամ կանխատեսվում են առանձին՝ այս խոշոր պահանջների զարգացումների և գործողության ոլորտի հետ կապված հնարավոր խեղաթյուրված հետևանքները հաշիվ առնելու համար:

Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստները և չվճարված պահանջների պահուստները սկզբնապես գնահատվում են համախառն հիմունքով, և իրականացվում է առանձին հաշվարկ վերաապահովագրության փոխհատուցումների չափը որոշելու համար: Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների գծով վերաապահովագրական ակտիվների հաշվեկշռային արժեքը գնահատելու համար այս մեթոդն օգտագործում է նախորդ տարիների տվյալները, փաստացի, սակայն չներկայացված պահանջների պահուստների համախառն գնահատականները և վերաապահովագրության պայմանագրերի պայմանները:

### *Ենթադրություններ*

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների չափման վրա ամենամեծ ազդեցությունն են գործում պատահարների առավել վաղ տարիների համար ակնկալվող վնասի հարաբերակցությանը վերաբերող ենթադրությունները: Ակնկալվող վնասի հարաբերակցությունը դա ակնկալվող պահանջների և վաստակած ապահովագրավճարների հարաբերակցությունն է: Պարտավորության ընդհանուր չափը որոշելիս՝ դրամական միջոցների ապագա հոսքերի կանխատեսումը ներառում է այն չափորոշիչների գնահատված արժեքը, որոնք կարող են ազդեցություն ունենալ առանձին պահանջի վրա (օրինակ՝ պահանջների հաճախականությունը, փոխհատուցման ժամկետները, ապահովագրվող պատահարի տեղի ունենալու ամսաթվի և պահանջի մարման միջև ընկած ժամանակահատվածը):

### *Զգայունության վերլուծություն*

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության գործունեության կարճաժամկետ բնույթի պատճառով, Ընկերության պորտֆելը զգայունություն է ցուցաբերում հիմնականում ակնկալվող վնասի հարաբերակցության փոփոխության նկատմամբ: Ընկերությունը ճշգրտումներ է կատարում ապահովագրական սակագների գծով, ելնելով այս փոփոխականների վերջին փոփոխություններից՝ վերջին միտումները հաշվի առնելու համար:

# 16 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Կապի սարքավորումներ և համակարգիչներ | Փոխադրա-միջոցներ | Այլ հիմնական միջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. | 29,518 | - | 29,212 | 277 | 59,007 |
| Ավելացումներ | 52,368 | 38,945 | 24,855 | 8,066 | 124,234 |
| Դուրս գրումներ | (269) | - | - | - | (269) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **81,617** | **38,945** | **54,067** | **8,343** | **182,972** |
| *Մաշվածություն և ամորտիզացիա* | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. | 10,037 | - | 6,852 | 39 | 16,928 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 23,990 | 870 | 2,734 | 118 | 27,712 |
| Դուրս գրումներ | (198) | - | - | - | (198) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **33,825** | **870** | **9,586** | **157** | **44,438** |
| **Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **47,792** | **38,075** | **44,481** | **8,186** | **138,534** |

| հազ. դրամ | Կապի սարքավորումներ և համակարգիչներ | Փոխադրա-միջոցներ | Այլ հիմնական միջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2010թ. | 7,676 | - | 2,231 | 2,698 | 12,605 |
| Ավելացումներ | 21,842 | - | 26,981 | 79 | 48,902 |
| Դուրս գրումներ | - | - | - | (2,500) | (2,500) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **29,518** | **-** | **29,212** | **277** | **59,007** |
| *Մաշվածություն և ամորտիզացիա* | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2010թ. | 924 | - | 588 | 479 | 1,991 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 9,113 | - | 6,264 | 2,060 | 17,437 |
| Դուրս գրումներ | - | - | - | (2,500) | (2,500) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **10,037** | **-** | **6,852** | **39** | **16,928** |
| **Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **19,481** | **-** | **22,360** | **238** | **42,079** |

2011թ. ընթացքում չեն եղել կապիտալացված փոխառության ծախսումներ, որոնք վերաբերում են հիմնական միջոցների ձեռքբերմանը (2010թ-ին՝ նման ծախսումներ չեն եղել):

# 17 Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2011թ. ընթացքում:

| **2011թ.**<br>**հազ. դրամ** | **Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.** | **Շահույթում կամ վնասում ճանաչված** | **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** |
|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | (270) | (270) |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | - | (3,711) | (3,711) |
| Տրված վարկեր | - | 12,238 | 12,238 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | - | 13,850 | 13,850 |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումներ | - | 15,458 | 15,458 |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | - | (6,742) | (6,742) |
| Այլ պարտավորություններ | - | 9,247 | 9,247 |
| Հարկային վնասներ | - | 10,747 | 10,747 |
| | **-** | **50,817** | **50,817** |

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել ստորև ներկայացվող հոդվածների գծով, քանի որ գոյություն ունի անորոշություն, թե արդյոք առկա կլիներ ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Ընկերությունը կկարողանար իրացնել այդ հոդվածներից ստացվող օգուտները:

| **2010թ.**<br>**հազ. դրամ** | **Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.** | **Չճանաչված ժամանակավոր տարբերությունների շարժ** | **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.** |
|---|---|---|---|
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | - | 7,564 | 7,564 |
| Այլ պարտավորություններ | - | 9,236 | 9,236 |
| Հարկային վնասներ | 20,528 | 35,326 | 55,854 |
| | **20,528** | **52,126** | **72,654** |

Հարկային վնասների ժամկետը լրանում է 2014-2015թթ.: Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

# 18 Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| Վերաապահովագրության գծով վճարվելիք ապահովագրավճարներ | 108,782 | 136,723 |
| Գործակալներին և բրոկերներին վճարվելիք գումարներ | 11,554 | 46,233 |
| Վճարվելիք պահանջներ | 4,276 | 690 |
| | **124,612** | **183,646** |

# 19 Վարկեր և փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 22-ում:

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| ***Ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | 142,916 | - |
| | **142,916** | **-** |

**Պայմաններ և մարման ժամկետներ**

Ստորև ներկայացված են գործող վարկերի պայմանները:

| | | | | **31 դեկտեմբերի 2011թ.** | | **31 դեկտեմբերի 2010թ.** | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **Արտարժույթ** | **Անվանակ տոկոսադր.** | **Մարման տարին** | **Անվանակ. արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** | **Անվանակ. արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 14.0% | 2012 | 90,587 | 90,587 | - | - |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 14.0% | 2012 | 52,329 | 52,329 | - | - |
| | | | | **142,916** | **142,916** | **-** | **-** |

Բանկային վարկերն ապահովված են 200,000 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ժամկետային ավանդներով (ծանոթագրություն 13):

## 20 Այլ պարտավորություններ

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| Պարտքի փոխանցման պայմանագրերի շրջանակում ձեռքբերված ակտիվների գծով վճարվելիք գումարներ | 32,869 | - |
| Աշխատակիցների հատուցումներ և աշխատավարձին վերաբերող պարտավորություններ | 16,270 | 9,313 |
| Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյին վճարվելիք գումարներ | 8,362 | - |
| Այլ հաշվեգրումներ | 1,479 | 18,766 |
| **Այլ ֆինանսական պարտավորություններ** | **58,980** | **28,079** |
| Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | 96,259 | 27,479 |
| **Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **96,259** | **27,479** |
| | **155,239** | **55,558** |

## 21 Բաժնետիրական կապիտալ

### (ա) Բաժնետիրական կապիտալ

| *Բաժնետոմսերի քանակը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված է այլ տեղեկատվություն* | Սովորական բաժնետոմսեր | | Արտոնյալ բաժնետոմսեր | |
|---|---|---|---|---|
| | **2011թ.** | **2010թ.** | **2011թ.** | **2010թ.** |
| Անվանական արժեք | 1,000,000 դրամ | 1,000,000 դրամ | 1,000,000 դրամ | 1,000,000 դրամ |
| Թողարկված առ 1 հունվարի | 1,404 | 1,070 | 466 | - |
| Թողարկված կանխիկի դիմաց | - | 334 | - | 466 |
| Թողարկված առ 31 դեկտեմբեր, ամբողջովին վճարված | 1,404 | 1,404 | 466 | 466 |

**Սովորական բաժնետոմսեր**

Բոլոր սովորական բաժնետոմսերը դասակարգվում են համարժեք հիմունքով Ընկերության մնացորդային ակտիվների գծով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

**Հետ չգնվող արտոնյալ բաժնետոմսեր**

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք չունեն փոխարկել կամ հետ գնել բաժնետոմսերը, սակայն իրավունք ունեն ստանալ անվանական արժեքի 9%-ի չափով տարեկան շահաբաժիններ: Եթե շահաբաժինը չի վճարվում, ապա արտոնյալ բաժնետոմսերը տալիս են քվեարկելու իրավունք մինչև բաժնետերերի հաջորդ տարեկան ժողովը: Այնուամենայնիվ, այս շահաբաժինը կուտակային բնույթ չունի:

Լուծարման դեպքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն առաջին հերթին ստանում են հայտարարված չվճարված շահաբաժինները և արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը: Այնուահետև, բոլոր բաժնետերերը՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը հավասարապես մասնակցում են մնացած ակտիվների բաշխմանը:

**(բ) Շահաբաժիններ**

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Ընկերության առավելագույն չբաշխված շահույթի չափով: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չուներ բաշխման ենթակա պահուստներ ՀՀ օրենսդրության համաձայն:

## 22 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է ապահովագրական գործունեության համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, որը ներառում է փոխարժեքի, տոկոսադրույքի, բաժնետոմսերի գնի հետ կապված ռիսկերը, ինչպես նաև արտարժույթի ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

**(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր**

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ընկերության Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման ու վերահսկման ընթացակարգերի մշակման և ներդրման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում:

**(բ) Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

## (գ) Տոկոսադրույքի ռիսկ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունները 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքներն այդ ամսաթվի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | 2011թ. Արժեք հազ. դրամ | 2010թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք | 2011թ. Արժեք հազ. դրամ | 2010թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | |
| **Տրված վարկեր** | | | | |
| - ՀՀ դրամով | 74,190 | 17.9% | 18,632 | 2.7% |
| **Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ** | | | | |
| - ՀՀ դրամով | - | - | 99,899 | 12.4% |
| **Բանկերում տեղաբաշխված միջոցներ** | | | | |
| - ՀՀ դրամով | 905,873 | 11.0% | 985,291 | 11.0% |
| - ԱՄՆ դոլարով | 475,238 | 9.0% | 321,281 | 8.0% |
| - Եվրոյով | 493,975 | 8.0% | 625,289 | 7.0% |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | |
| **Վարկեր և փոխառություններ** | | | | |
| - ՀՀ դրամով | 142,916 | 14.0% | - | - |
| **Այլ ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| - ՀՀ դրամով | 32,869 | 14.0% | - | - |

Տոկոսադրույքի ռիսկը Ընկերության եկամուտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավել կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

*Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն*

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության (վերագնորոշման ռիսկի) նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 տոկոսային կետով (տկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2011թ. ու 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| 100 տկ զուգահեռ նվազում | (6,981) | (4,489) |
| 100 տկ զուգահեռ աճ | 6,981 | 4,489 |

## (դ) Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավել կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 134,647 | 588 | 30 | 135,265 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 905,873 | 475,238 | 493,975 | 1,875,086 |
| Տրված վարկեր | 74,190 | - | - | 74,190 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 724,272 | 8,084 | - | 732,356 |
| **Ընդամենը ակտիվներ** | **1,838,982** | **483,910** | **494,005** | **2,816,897** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 142,916 | - | - | 142,916 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 17,096 | 107,516 | - | 124,612 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 58,980 | - | - | 58,980 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **218,992** | **107,516** | **-** | **326,508** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **1,619,990** | **376,394** | **494,005** | **2,490,389** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **հազ. դրամ** | **ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** | **Եվրո** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 213,960 | 17,062 | 390 | 231,412 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 985,291 | 321,281 | 625,289 | 1,931,861 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | 99,899 | - | - | 99,899 |
| Տրված վարկեր | 18,632 | - | - | 18,632 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 436,859 | 29,376 | - | 466,235 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 17,777 | - | - | 17,777 |
| **Ընդամենը ակտիվներ** | **1,772,418** | **367,719** | **625,679** | **2,765,816** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 71,785 | 111,861 | - | 183,646 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 28,079 | - | - | 28,079 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **99,864** | **111,861** | **-** | **211,725** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **1,672,554** | **255,858** | **625,679** | **2,554,091** |

Ստորև ներկայացվում է արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ Ընկերության տարվա զուտ եկամտի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքի 5% փոփոխության պարզեցված սցենարի հիման վրա:

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 5% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ | 18,820 | 12,793 |
| Եվրոյի փոխարժեքի 5% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ | 24,700 | 31,284 |

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերը նշված արտարժույթների արժեզրկումը ՀՀ դրամի նկատմամբ կունենար հավասար՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (ե) Վարկային ռիսկ

Ֆիքսված եկամուտով արժեթղթերի պորտֆելը, բանկերում տեղաբաշխված միջոցները, ընթացիկ հաշիվները և տրամադրված վարկերը ենթարկվում են վարկային ռիսկի: Վարկային ռիսկը հնարավոր վնաս կրելու ռիսկն է փոխառուի կողմից պարտքը մարելու անկարողության պատճառով: Ընկերության նպատակն է վաստակել բավարար եկամուտ արժեթղթերի դիվերսիֆիկացված պորտֆելում ներդրումներ կատարելու միջոցով: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է միայն պետական արժեթղթեր գնելու միջոցով:

Ընկերությունը վերաապահովագրում է որոշ ռիսկեր վերաապահովագրական ընկերություններում: Վերաապահովագրական ընկերություն ընտրելիս հաշվի է առնվում վճարունակությունը և հուսալիությունը և պակաս չափով՝ տարածվածությունը/ տարաբնույթությունը (ռիսկի տարածումը պայմանագրային կողմերի միջև):

Ընկերությունն ունի նաև այլ դեբիտորական պարտքերի մնացորդներ, որոնք կարող են ենթարկվել վարկային ռիսկին: Այս դեբիտորական պարտքերից ամենաէականները գործակալներից ստացվելիք գումարներն ու ստացվելիք ապահովագրավճարներն են: Ապահովադիրներից գումարները չստանալու ռիսկը նվազեցնելու համար ապահովագրության պայմանագրում ներառվում է դրույթ, համաձայն որի ապահովագրության պայմանագիրը չեղյալ է հայտարարվում ապահովագրավճարը սահմանված ամսաթվին չվճարելու դեպքում: Ընկերությունը չի պահանջում գրավ գործակալներից ստացվելիք գումարներն ապահովելու համար:

Բանկերում տեղաբաշխված միջոցների հետ կապված վարակային ռիսկը նվազեցնելու համար Ընկերությունը կատարում է տարաբնույթ տեղբաշխումներ և հիմնականում ներդրումներ Հայաստանի այն բանկերում, որոնց վճարունակությունը գնահատվում է որպես բարձր ղեկավարության կողմից:

Ընկերությունը կանոնավոր կերպով վերահսկում է իր ենթարկվածությունը վարկային ռիսկին:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների հետ կապված վարկային ենթարկվածության ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | |
| - Ընթացիկ հաշիվներ | 130,713 | 170,074 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 1,875,086 | 1,931,861 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | - | 99,899 |
| Տրված վարկեր | 74,190 | 18,632 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 732,356 | 466,235 |
| **Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը** | **2,812,345** | **2,686,701** |

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի երեք պարտապան (2010թ-ին՝ երեք պարտապան), որոնց հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է ընդհանուր վարկային ռիսկի 10%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պարտապանների գծով վարկային ռիսկը կազմում է 929,875 հազար դրամ (2010թ-ին՝ 920,663 հազար դրամ):

**(զ) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ըներությունը կունենա դժվարություններ պարտավորվածությունները կատարելիս: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է ֆինանսական կազմակերպությունների՝ ներառյալ Ընկերության իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Ընկերության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են Ընկերության ակտիվները և պարտավորություններն ըստ պայմանագրով սահմանված մարման ժամկետի 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ընկերության ֆինանսական պարտավորությունների գծով չզեղչված դրամական միջոցների հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի, էականորեն չեն տարբերվում այս վերլուծության տվյալներից:

| **հազ. դրամ** | **Մինչև 1 տարի** | **1-ից 5 տարի** | **Առանց նշված ժամկետայ-նության** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 135,265 | - | - | 135,265 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 1,875,086 | - | - | 1,875,086 |
| Տրված վարկեր | 52,383 | 21,807 | - | 74,190 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 699,703 | 32,653 | - | 732,356 |
| Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում | 107,575 | 26,594 | - | 134,169 |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումներ | 159,884 | - | - | 159,884 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | 138,534 | 138,534 |
| Այլ ակտիվներ | 3,307 | - | 14,997 | 18,304 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | - | 17,414 | - | 17,414 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | - | - | 50,817 | 50,817 |
| Կանխավճարներ | 85,870 | - | - | 85,870 |
| **Ընդամենը ակտիվներ** | **3,119,073** | **98,468** | **204,348** | **3,421,889** |
| | | | | |
| **Պարտավորություններ** | | | | |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | 617,367 | 33,176 | - | 650,543 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 124,612 | - | - | 124,612 |
| Որպես կանխավճար ստացված պարգևավճարներ | 779,319 | - | - | 779,319 |
| Վարկեր և փոխառություններ | 142,916 | - | - | 142,916 |
| Այլ պարտավորություններ | 155,239 | - | - | 155,239 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,819,453** | **33,176** | **-** | **1,852,629** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | **1,299,620** | **65,292** | **204,348** | **1,569,260** |

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են Ընկերության ակտիվները և պարտավորությունները ըստ պայմանագրով սահմանված մարման ժամկետի 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ընկերության ֆինանսական պարտավորությունների գծով չզեղչված դրամական միջոցների հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի, էականորեն չեն տարբերվում այս վերլուծության տվյալներից:

| հազ. դրամ | Մինչև 1 տարի | 1-ից 5 տարի | Առանց նշված ժամկետայ-նության | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 231,412 | - | - | 231,412 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 1,092,764 | 839,097 | - | 1,931,861 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | 10,872 | 89,027 | - | 99,899 |
| Տրված վարկեր | 18,632 | - | - | 18,632 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 466,235 | - | - | 466,235 |
| Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում | 74,838 | 40,882 | - | 115,720 |
| Հետաձգված ձեռքբերման ծախսումներ | 170,155 | - | - | 170,155 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | 42,079 | 42,079 |
| Այլ ակտիվներ | 6,007 | - | 11,770 | 17,777 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | - | 6,496 | - | 6,496 |
| Կանխավճարներ | 41,418 | - | - | 41,418 |
| **Ընդամենը ակտիվներ** | **2,112,333** | **975,502** | **53,849** | **3,141,684** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | 261,167 | 63,816 | - | 324,983 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 183,646 | - | - | 183,646 |
| Որպես կանխավճար ստացված պարգևավճարներ | 1,166,179 | - | - | 1,166,179 |
| Այլ պարտավորություններ | 55,558 | - | - | 55,558 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,666,550** | **63,816** | **-** | **1,730,366** |
| **Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **445,783** | **911,686** | **53,849** | **1,411,318** |

# 23 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

## (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **հազ. դրամ** | **Վարկեր և դեբիտորական պարտքեր** | **Այլ ամորտիզացված արժեք** | **Ընդամենը հաշվեկշռային արժեք** | **Իրական արժեք** |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 135,265 | - | 135,265 | 135,265 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 1,875,086 | - | 1,875,086 | 1,875,086 |
| Տրված վարկեր | 74,190 | - | 74,190 | 74,190 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 732,356 | - | 732,356 | 732,356 |
| | **2,816,897** | **-** | **2,816,897** | **2,816,897** |
| | | | | |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ | - | 124,612 | 124,612 | 124,612 |
| Վարկեր և փոխառություններ | - | 142,916 | 142,916 | 142,916 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | 58,980 | 58,980 | 58,980 |
| | **-** | **326,508** | **326,508** | **326,508** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Մինչև մարման ժամկետը պահվող | Վարկեր և դեբիտորական պարտքեր | Այլ ամորտիզացված արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք | Իրական արժեք |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 231,412 | - | 231,412 | 231,412 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | - | 1,931,861 | - | 1,931,861 | 1,931,861 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքներ | 99,899 | - | - | 99,899 | 99,899 |
| Տրված վարկեր | - | 18,632 | - | 18,632 | 18,632 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | - | 466,235 | - | 466,235 | 466,235 |
| | **99,899** | **2,648,140** | **-** | **2,748,039** | **2,748,039** |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ | - | - | 183,646 | 183,646 | 183,646 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | 28,079 | 28,079 | 28,079 |
| | **-** | **-** | **211,725** | **211,725** | **211,725** |

Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են կիրառելով դրամական միջոցների զեղչված հոսքերի մեթոդը` հիմնված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա և օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի նկատմամբ կիրառելի զեղչման դրույքը:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը հիմնվել է հետևյալ ենթադրությունների վրա.

- 24% և 8%-11% զեղչերը կիրառվում են համապատասխանաբար ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարների և բանկերում տեղաբաշխված միջոցներից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:
- 14% զեղչը կիրառվում է վարկերից և փոխառություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չուներ այնպիսի ֆինանսական գործիքներ, որոնց իրական արժեքը որոշվում է ոչ շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ օգտագործող գնահատման մեթոդներով:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ և «անկախ կողմերի միջև գործարքում»: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին` անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

## 24 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ որպես ապահովագրական ընկերությունների կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն ընկերությունների կապիտալը պետք է կազմի 1,500,000 հազար դրամ 2011թ. հունվարի 1-ից (31 դեկտեմբերի 2010թ.՝ 1,000,000 հազար դրամ): 2011թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կապիտալը համապատասխանում էր սահմանված նվազագույն չափին:

## 25 Պայմանական դեպքեր

### (ա) Դատական վարույթներ

Ժամանակ առ ժամանակ, բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ ներկայացվում են հայցեր: Իր գնահատումների և ներքին ու արտաքին մասնագիտական խորհրդատվությունից ելնելով՝ ղեկավարությունը գտնում է, որ բացի սույն ֆինանսական հաշվետվություններում որպես պահուստ գրանցվածների, Ընկերությունն այլ էական վնասներ չի կրի:

### (բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել սույն ֆինանսական հաշվետվություններ համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

# 26 Գործարքներ կապակցված կողմերի հետ

## (ա) Գործարքներ տնօրենների և վերադաս ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է վարչական ծախսերում ներառված Խորհրդի և վերադաս ղեկավարության ընդհանուր վարձատրությունը (ծանոթագրություն 9):

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| Վերադաս ղեկավարության հատուցումներ | 111,384 | 39,051 |
| Աշխատավարձին վերաբերող հարկեր | 7,203 | 13,841 |
| **Ընդամենը վարձատրություն** | **118,587** | **52,892** |

Ստորև ներկայացված են 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերադաս ղեկավարության հետ գործարքների մնացորդները:

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | |
| **Ակտիվներ** | | |
| Տրված վարկեր | 5,250 | - |

## (բ) Գործարքներ բաժնետերերի և այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերի հետ գործարքները ներառում են բաժնետերերի հետ կապակցված ընկերությունների հետ գործարքները:

Ստորև ներկայացված են 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները:

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | |
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 41,594 | 106,964 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 251,935 | 293,485 |
| Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ | - | 15 |

Ստորև ներկայացված են 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի և այլ կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքները:

| **հազ. դրամ** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|
| **Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** | | |
| Տոկոսային եկամուտ | 22,929 | 14,798 |
| Համախառն ապահովագրավճարներ | 551 | 1,799 |
| Փաստացի պահանջներ | - | 130 |